Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«08» 01 2025թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «13» 01 2025թ.
N 1-25 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

<<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը ուղղված է քոլեջի որակի ապահովման համակարգի վերափոխմանը, բարելավմանը և զարգացմանը:

Քոլեջում որակի ներքին ապահովման համակարգի վերանայումը ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ժամանակային և նյութական ռեսուրսների վերլուծությունը, վերանայումը կամ վերափոխումը:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման նպատակն է որակի ներքին ապահովման համակարգի բարելավումը և կատարելագործումը:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման խնդիրն է երաշխավորել քոլեջում որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի արդյունավետությունը տարբեր մակարդակների վրա:

Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հիմք կարող են հանդիսանալ՝

- քոլեջի գործունեության բոլոր բաղադրիչների մշտադիտարկման արդյունքները,
- քոլեջի գործունեության արտաքին փորձաքննության արդյունքները,
- որակի ապահովմանը վերաբերող չափանիշների վերափոխումը,
- քոլեջի որակի ներքին ապահովման համակարգը կարգավորող փաստաթղթերում թերությունների բացահայտումը,
- քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի վերլուծության արդյունքները,
- խորհրդակցությունը որակի ներքին ապահովման համակարգի հետ առնչվող շահակիցների հետ,
- քոլեջի շահակիցների որակի ապահովման համակարգի վերաբերյալ կարծիքները:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման մեխանիզմներ և գործիքներ կարող են հանդիսանալ՝

- որակի ներքին ապահովման համակարգի բաղադրիչների պարբերական մշտադիտարկումները,

- քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի բարելավմանը և վերափոխմանը ուղղված ղեկավարության որոշումները,
- հարցումները շահակիցների շրջանակներում:

Վերանայումը ներառում է տարբեր գործընթացների վերանայում և ուղղված է քոլեջի գործունեության շարունակական բարելավմանը, այլ ոչ թե վերահսկմանը:

Վերանայման գործընթացը պետք է լինի փաստերի վրա հիմնված, հստակ և թափանցիկ:

Որակի ներքին ապահովման համակարգի բոլոր քաղաքականությունների և ընթացակարգերի վերանայումը կարող է նաև կատարվել յուրաքանչյուր պահին, երբ առաջանում է դրա անհրաժեշտությունը:

Վերանայումը կարող է ավարտվել՝

- առանց փոփոխությունների կատարման,
- աննշան շտկումներով,
- վերանայվող փաստաթղթի հիմնական կետերի շտկումով,
- վերանայվող փաստաթղթի չեղյալ համարումով:

Վերանայման ավարտին վերանայման համար պատասխանատուն պետք է տեղեկացնի բոլոր շահակիցներին վերափոխումների վերաբերյալ: